ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 4306-Ա « 21 » հոկտեմբերի 2025թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ և 50-րդ հոդվածներով՝ Երևան քաղաքում երթևեկության ծանրաբեռնվածության խնդրի լուծման նպատակով՝

1. Ստեղծել ճգնաժամային աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) ճգնաժամային աշխատանքային խումբը ստեղծվում է Երևան քաղաքում երթևեկության ծանրաբեռնվածության խնդրի լուծման նպատակով և իրականացնում է խնդրի լուծման և մշակման համար անհրաժեշտ գործողություններ:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
21.10.2025թ.
N 4306-Ա որոշման

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Խմբի ղեկավար Երևանի քաղաքապետ	Տիգրան Ավինյան
Խմբի անդամներ Երևանի քաղաքապետի տեղակալ	Սուրեն Գրիգորյան
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (համաձայնությամբ)	Արմեն Սիմոնյան
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ (համաձայնությամբ)	Արմեն Մկրտչյան
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության պետ (համաձայնությամբ)	Արթուր Խուդինյան
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության պետի տեղակալ (համաձայնությամբ)	Արման Չիլինգարյան
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)	Նորիկ Սարգսյան
Վարչապետի աշխատակազմի տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության պետ (համաձայնությամբ)	Աստղիկ Մելքոնյան

«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն	Սարգիս Մանուկյան
«Երևանտրանս» ՓԲԸ-ի տնօրեն	Էդուարդ Այվազյան
Խմբի քարտուղար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ	Վազգեն Հարությունյան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**